«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3101 Գյումրի, Վարպետաց 176, 301
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

Շիրակի մարզպետ Ա. Գիզիրյանին

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Պարոն Գիզիրյան

Մեր կազմակերպությունը Համաշխարհային բանկի քաղաքացիական հասարակության հիմնադրամ – 2010թ. ծրագրի շրջանակներում իրականացնելու է աղետի գոտում ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման կարգի մասին հանրային իրազեկում և այդ գործընթացի մոնիտորինգ: Այդ նպատակով խնդրում ենք մեզ ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն:

Մենք տեղյակ ենք, որ ՀՀ կառավարության 27.07.2000թ. թիվ 422 որոշմամբ հաստատվել է ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի, տիրազուրկ (լքված) անշարժ գույքի հաշվառման կարգը, որի 12-րդ կետի պահանջների համաձայն ինքնակամ կառուցված շենք, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի ընթացիկ հաշվառումը իրականացնում է համայնքի ղեկավարը:

Ուստի խնդրում ենք մեզ տրամադրել մեր մարզի քաղաքներում և մասնավորապես Գյումրիում առկա, գույքագրված ինքնակամ բնակելի կառույցների մանրամասն ցանկը:

Խնդրում ենք հնարավորության դեպքում մեր կողմից հարցվող տեղեկատվությունը հնարավորության դեպքում տրամադրել նաև էլեկտրոնային տարբերակով, ուղարկելով՝ info@shirakcentre.org

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
06.07.2010թ.